

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

Տ է Լ Է Ք օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՆ

Հաւատարման լուրեր. Հեռագիրներ. Որոշակ հար-
ցը. Երգերում հայոց առաջնորդի նամակը լորդ
Սթրաֆֆին. Հայոց հարցը և դիպլոմատիան.—
ՆԵՒԻԹԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Բամբակի այգիների գինը.
— ՆԱՄԱԿԻ ՆԱՄԱԿԻՆ. Դեղին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Նամակ Թիֆլիսից.
— ՆԱՄԱԿԻ ՆԱՄԱԿԻՆ. Նամակ Թիֆլիսից. Նա-
մակ Աւստրիայից.— ՀԵՒԱԳՈՒՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐ-
ՐՈՒԹԻՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Խաչապի խաչի-
ֆան:

ՀԱՅԱՍՏԱՎԱՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին օրերի լուրերի մէջ՝ մի մեծ
խառնաշփոթութիւն է տիրում: Մի կողմից
անորոշ լուրեր ըէֆօմիներ ծրագրի խմբագ-
րութեան մասին, միւս կողմից նոր կոտո-
րածներ, նոր ձեռնարկներ և նոր ձեռքա-
լուծութիւններ:

Հեռագիրը յայտնեց, որ Եւրոպայի Հոկ-
տեմբերի 5-ին ընդունել է բարեկարգում
ներքին ծրագիրը, իսկ ծրագրից թողնալ-
ցուծութիւնը հոկտեմբերի 7-ին, ուրեմն երկու
օր յետոյ, տեղեկացնում է, որ հարկւրաւոր
հայեր բանտարկվեցին և նրանց սպառ-
նում է գնդապետական դատարանի դատաւար-
տութիւնը:

Ազգարում տեղի է ունեցել կոտորած.
Սամսոնում տիրում է սարսափ. վանում
նայնպէս. երկրի խորքերում ոչ մի փոփոխու-
թիւն չէ պիտի լաւը,—այդ բոլորն ոչ մի կերպ
չէ սահմանում այն լուրերի, թէ Թիֆլիսից կա-
ռուցութիւնը ընդունել է ծրագիրը, որով-
հետեւ այդ ծրագրի ընդունելը պէտք է ան-
միջական գործնական հետեւանքներ
ունենար զէթ քաղաքական բանտարկու-
թիւնների վերաբերմամբ: Այս անգամ գոնե՛
այդ ծրագիրը պէտք է տարբերվի գաղափար
խառնուրդներից, խառնուրդ-հիմնադրու-
թիւններից և ուրիշ բազմախտոտում ծրագրի նե-
րքից, որոնք ոչ մի բան չեն փոխել իրերի
վիճակի, ազգաբնակչութեան կացութեան
պայմանների մէջ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ի Ս Լ Ա Մ Ի Խ Ա Լ Ի Ֆ Ա Ն

III

II. Խալիֆի ամենազգեստը պարտականու-
թիւնն է անխախտ և անսասան պահել զուրա-
նի վարդապետութիւնը, ինչպէս անմիջական իր
իշխանութեան տակ գտնված երկրներում, նոյն-
պէս նրա սահմաններից դուրս, հսկել և գործա-
դրել տալ կէս առ կէս իսլամի շարիաթը, որից
դուրս իսլամը օրէնք, կամ կանոն չէ կարող ու-
նենալ: Եթէ խալիֆը այստեղ էլ ներհակ ըն-
թացք բռնէ, նա խալիֆ լինել չէ կարող, ու-
րեմն իսլամը պարտաւոր չի լինի նրան հոյա-
տակվելու: Բայց քանի որ այսօր սուլթանը, երկ-
րի քրիստոնեայ ազգաբնակչութեան պահանջման
և եւրոպական քրիստոնեայ պետութիւնների հետ
կապած դաշնագրերի համաձայն՝ ստիպված նոր-
նոր օրէնսդրութիւն է սահմանել, այնպէս որ
այդ նորոգ սահմանված կանոնների համեմատ էլ
կառավարվելու են իսլամները, ուրեմն սուլթա-
նը իր խալիֆական իշխանութեան ղէմ է վար-
վել հետեւապէս իսլամը նրա պար ալ ևս Մահ-
մէդի տեղեկարի հայեացք չէ կարող ունենալ:
Եթէ քննենք վերջին դարի օսմանեան պատ-
մութիւնը, Ալեքսի Գ.-ից մինչև մեր օրերը, մենք
կը նկատենք, թէ ինչ բռնի ուժերով են քրիս-
տոնեայ պետութիւնները ստիպել օսմանեան
սուլթաններին վերանորոգութիւններ մտցնել
երկրում, մասնաւորապէս վարչական և դա-

նէ վերջապէս, նոյն իսկ ծրագրի վերա-
բերելով տեղեկութիւնները մինչև այժմ անո-
րոշ են և հակասական: Կա՞յ կ օ ն ա ռ օ լ թ է
չը կայ,—այդ մինչև այժմ չէ պարզվում:
Կա՞յ մի որ և է երաշխաւորութիւն, որ
բարեօրոշմանը կիրառութիւն,—անյայտ
է բոլորովին: Ի՞նչ է այն գեներալ-նա-
հանգապետի պաշտօնը, որի մասին յայտ-
նում է «Ռուսաց գործակալութեան» հե-
ռագիրը. ունի՞ արդօք դա մի որ և է նմա-
նութիւն այն ընդհանուր կառավարչի կամ
փոխարքայի պաշտօնին, որի մասին այնքան
խօսվեց եւրոպական լրագրիներում:

Ահա մի շարք հարցեր, որոնց բաւարար
պատասխանը անկարելի է գտնել մինչև
այժմ մեզ հասած տեղեկութիւնների մէջ:
Մենք թող չենք տալիս մեզ մանկ դա-
տարկութիւնների մէջ, համարելով դրանց
վարժամբ. բայց չենք կարող չը նկատել, որ
ըէֆօմիները հարցը որոշ լուծում չէ ստա-
ցել, և ծրագրի պաշտօնական ընդունելու-
թիւնը կրում է թէ օրիտիակա՛ն կեր-
պարանք, այնպէս որ գործադրութեան խըն-
դիրը բոլորովին բաց է մնում:

Իսկ ոչ մի ժամանակ այնքան անհրա-
ժեշտ չէ եղել արագացնել գործը, որքան
այժմ, ներկայ կրիտիկական րօպէսներում,
երբ Թիֆլիսից հայ ազգաբնակչութեան վի-
ճակը մեծ վտանգի մէջ է և մահմետական
տարրը սկսում է իր ֆանատիկոսութեան
մէջ հասնել խելագարութեան:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Սեփական)

Կ ա ռ ա ռ օ լ զ ա ն ի վրայով (մեր և
Թիֆլիսից սահման), հոկտեմբերի 13-ին
ստացանք հետևեալ հեռագիրը, որ ու-
ղարկված է մեզ Եւրոպայի, հոկտեմբերի
10-ից:

«Տրապիզոնի արիւնհեղութիւնից յետոյ՝
Տրապիզոնի, Գիւմրիսանի և Բայբուրթի հո-
վաններում, մինչև Եւրոպայի, Թիֆլիսից, լա-

տաստանական բաժնիներում և որքան խոչ-
դոնների են հանդիպել սուլթանները ամեն մի
վերանորոգողական քաղաքական ժամանակ: Ուր-
քան մեծ կորուստների է ենթարկվել պետու-
թիւնը, ինչ զրկանքների է ենթարկվել ժողո-
վուրդը, ազգաբնակչութիւնը, վերանորոգութիւն-
ներ չը մտցնելու պատճառով: Սուլթանի կառա-
վարութիւնը գտնվել է երկու օրերի մէջ. մի
կողմից քրիստոնեական իսլամի հետ հաւասա-
րութիւն պահանջող վերանորոգութիւն և ար-
ածոնութիւն, միւս կողմից խալիֆական պարտա-
կանութիւն իսլամի առանձնաշնորհաւ երկնային
կարգերի անխախտ պահպանում:

Սուլթանի վարչութիւնը ուրիշ ելք չունենա-
լով պարտաւորվել է կեղծել և խաբել խոտա-
նալ և չը կատարել, խախտել-չեղծելով (հրո-
վարտակ) կուրացնել արտաքին աշխարհին, ներ-
քին գաղտնի հրահանգներով, իւլէմներին ձեռ-
քով շարունակել իր ընթացքը դարձուր ուղղու-
թիւնով: Այստեղ պէտք է աւելացնել, որ սուլ-
թանները քրիստոնեաներին խոտաւայած արտ-
նութիւնների բոլոր հրովարտականքները և հրատա-
րակված օրէնսդրութիւնները, խմբագրվելուց յե-
տոյ, նախապէս առաջարկվել են իսլամ իւլէմնե-
րի քննութեան ու փոփոխութեան և չեղծելով
համաձայն ու օրինական ճանաչվելուց, չէյն-իւ-
լիսլամից վաւերացվելուց յետոյ են հրատարակ-
վել:

Բայց և այնպէս, սրանցից ինչ օգուտ, քանի
որ հրատարակված բոլոր հրովարտականքներն ու
օրէնսդրութիւնները չեղծվել են հակառակ են
եղել: Բաւական է, որ դրանցով խոտաւայել է
ճանաչել «բաշան երին» իսլամի ժառանգների

գերը և աջարցիները կողոպտեցին, աւե-
րեցին և այրեցին տասերեք հայ գիւղեր:
Սպանվածները բազմաթիւ են:

«Կեմբոյնում և Բայբուրթի մօտ, Թիֆլի-
սից զօրքերի ձեռքով նոյնպէս սպանվեցին
և կողոպտվեցին 200-ից աւելի Կ. Պօլիս
գնացող և հայրենիք վերադարձող հայ
ձանապարհորդներ:

«Եւրոպայի վտանգաւոր դրութեան մէջ
է: Բայց առ բայց կոտորած է սպանվում:
«Անգլիական հիւպատոսը ապահովու-
թիւն պահանջեց քրիստոնեայ ազգաբնա-
կութեան համար:

«Եւրոպայի և Տրապիզոնի մէջ ամեն
շարժում և յարաբերութիւն ընդհատված
է: Արքունական դատարկ պօստը, բայց
պաշտօնական նամակներից, դադարեց հա-
ցնել ամենահասարակ նամակներ: Ասիական
Թիֆլիսից թագաւորում են՝ անիշխա-
նութիւն և քիւրդերը:»

(Ռուսաց գործակալութեան)

Կ. Պօլիս, 12 հոկտեմբերի: Մեծ վիզի-
լը, ուղարկելով նահանգապետներին հայ-
կական ըէֆօմիներ ծրագիրը, հրաւերեց
գլխաւոր կօմիսար Շաքիր-փաշային խիստ
ուշադրութիւն դարձնել այդ ըէֆօմիների
կիրառութեան վրա:

Կ. Պօլիս, 12 հոկտեմբերի: Հայէպի և
Ատանայի (Կիլիկիա) դատաւներում դրու-
թիւնը վտանգաւոր է,—ապստամբութեան
պատճառով, քրիստոնեայ ազգաբնակչութեան
նոր արիւնհեղութիւններ են սպանում:

Վարնա, 12 հոկտեմբերի: Կ. Պօլիսից
ստացված տեղեկութիւնների համեմատ,
այնտեղ զօրեղանում է ազատամիտութիւնը,
քական շարժում: Փողոցները պատերի վրա
կապեցած են յեղափոխական պրօկլամացիա-
ներ:

«Մի քանի սօֆիստներ, Թիֆլիսից յե-
ղափոխական կուսակցութեան պարագլուխ-
ներ, անհետացան: Լուր է պտտում, որ
շարժութ օրը ձեռքաւորված են «երիտասարդ-

հետ հաւատար խալիֆի թագաւորութեան մէջ.
բաւական է, որ ասել է, թէ օրէնքը նրանց
հաւասար պիտի նկատէ,—արդէն չեղծվել խալի-
վել է, իսլամի օրէնքը ոտքի տակ է տրորվել:
Հայաւ այն դատաստանական, աղմուկաւորական
և ուրիշ հիմնարկութիւնները, որոնք բոլորն էլ
իսլամի չեղծվելու հակառակ են: Իսլամ երկրում,
բացի դուրանի աշակերտ դադիներէն, ուրիշ մահ-
կանացու ինչպէս կարող է դատաւոր լինել, և
ամեն մէկու հիմնված պիտի լինի չեղծվել վրա,
ուրեմն այդ նորահաստատ դատարանները, որոնց
մէջ գտնվում են «բաշան երին» ևս, փակել են
իսլամի երկնային չեղծվելու դռները միւսիւրմա-
նի առաջ, վերջերս են խալիֆի պետութեան
միջից Ալլահաւոր օրէնքը:

Հետեւեալ իսլամ ժողովուրդը, նրա հետ իւ-
լէմների երկրորդական դասը իսկապէս իսլամի
չեղծվել խալիվում են համարում, հակառակ
պաշտօն չըճապատող և երկրի գլխաւոր վարչու-
թիւնը ձեռքն ունեցող առաջնակարգ իւլէմների
ջանքերի, որոնք իրանց չաղ բաժնիներից և
բարձրակարգ ավոտներից չը բաժնավիւր հա-
մար կեղծում ու համակերպվում են սուլթանի
պաշտականների և մինիստրների հետ և իւր թէ
իսլամի բարեքը նկատի ունենալով՝ արդարաց-
նում ու օրինականացնում են դրանց ընթացքը:
Տրանսլում է ժողովուրդը խալիֆի ղէմ, զգում է,
որ «խուրդէն» նրա անտանով կարգաւորվ մե-
ղանում է կրօնի ղէմ, բայց տատանվում է,—իւ-
լէմները, առաջնորդները նրան կաշկանդում են,
նրան մոլորեցնում են և նա ինքն էլ այդ անել
դրութիւնից ազատվելու մի նպատակաւ հար
չէ գտնում:

Թիֆլիսի կուսակցութեան 50 ղեկավա-
րողներ: Նրանց տարան բժշկական դպրոցը,
ուր դատաստանի ենթարկվեցին հայոց
շարժմանը մասնակցելու համար, և անյա-
պաղ պլակատվեցին:

ՕՐԱՅ ՀԱՐՑԸ

XXXVI

Կան կարծողներ,— և դրանց թիւը, տարաբաղ-
դաբար, փոքր չէ,— որ Թիֆլիսից բարձր կառա-
վարութիւնը, եթէ կամենայ էլ, չառ մեծ արտ-
նութիւններ չէ կարող տալ քրիստոնեայ ազգա-
բնակչութեան, որովհետեւ դա, իբրեւ թէ, կը գրգռի
մահմետական ամբողջին, նրա կրօնական դժա-
մունքները, և առիթ կը տայ քրիստոնեաների
կոտորածին, հակառակ նոյն իսկ կառավարու-
թեան ցանկութեան:

Եթէ ճիշդ լինէր այդ երկիւղը և հիմնված
փաստերի վրա, այն ժամանակ, ընտանաբար,
ոչ մի խելքը գլխին մարդ՝ Թիֆլիսից կառավա-
րութիւնից չէր պահանջի չառ մեծ, բացառիկ
արտօնութիւններ և քրիստոնեաների համար,
որովհետեւ ոչ ոքի մաքուր անգամ չի անցկեցնայ
այնպիսի դրութիւն ստեղծել, որ մի և նոյն երկ-
րում ապրող, երկու դատաւութեան պատկանող
ազգութիւններ դառնան միմեանց անհաշտ, ու-
րեւի թշնամիներ, և սկսեն միմեանց կոտորել,
առաջ բերելով արեան անլերջ գետեր, ամբիւր
զոհներ...

Սակայն իրականութիւնը բոլորովին հակա-
ռակն է ասում: Այն մարդիկ, որոնք երկիւղ
են կրում մահմետական ֆանատիկոսութիւնից, և
կարծում են, որ դրգռել մահմետական ամբողջը
կը նշանակի քրիստոնեաների նոր կոտորածներ
առաջ բերել, իրանց այդ երկիւղը և ենթադ-
րութիւնը հիմնված են այն երկուքի վրա, որ
մահմետականը սարսափելի թշնամի է քրիստո-
նէութեան, և քրիստոնեայի որ և է առաւելու-
թիւնը կամ արտօնութիւնը կատարեցնում է
Մահմետի հետեւողներին:

Իւլէմների, իրանց ֆէթւանները արդարացնե-
լու համար, գլխաւոր փաստը նրանումն է,
նրանք ասում են դադարաւոր, որ այդ բոլորը
գրվում և անվում է իսլամի բարեքի համար, մի
կերպ եւրօպացիներին մոլորեցնելու, մինչև բա-
րեյաջող ժամանակի հասնելը: Բայց ժողովուրդը,
կարգացողները, սօֆիստները իրանց ձեռքում
աւելի զօրեղ փաստ ունեն, այն է, թէ—իսլա-
մի օրէնքը, դատանալը բացաւայտ պիտի լինի,
զարդապաղի և թագաւորի կրօնքով՝ նրանք չեն
կարող չեղծվել ճանապարհով գնալ և խոտաւայ-
ված երանութեան հասնել: Սրանից պարզ է,
որ այդպիսի առաջնորդները չեն կարող այլ ևս
ճանաչվել իսլամի աւանդապահ իւլէմների և
սուլթանը Վարդաբէի արժանաւոր յաջորդ:

III. Խալիֆը պիտի օր ու գիշեր տընի իսլամի
տարածման խնդրով, պիտի ջանայ նորանոր եր-
կրիներ նուաճել անօրէններից և այլաբաննե-
րից և չը պիտի թող տայ, որ իր գնդերը, որոնց
հարկ եղած ղէպքում երկնային մէլախներն են
(հրեշտակներ) օգնութեան հասնելու, պատերազ-
մի դաշտից գլխաւոր ետ դառնան, կամ փախ-
չեն այդ ճակատամարտերից:

Բայց չարաբատիկ բաղդի ողին երեսը վա-
ղուց չուտ է տուել օսմանեան տարաւարձար
սուլթանների յաջորդներից: Հարկը տարուց ա-
ւելի է, ամեն կողմից խալիֆի գլխաւորները
ջարդվում, կոտորվում, ցրվում ու փախչում են
ճակատամարտներից և երկնային զօրութիւննե-
րը չեն գալիս նրանց օգնութեան, որից կարելի
է գուշակել, որ Մահմէդն էլ երես է չուտ տուել
օսման դաշակալներից և չէ ընդունում նրանց
իր արժանաւոր յաջորդ: Մինչև անգամ Այի-

Այդ ճիշդ է: Բայց չը պէտք է մոռանալ և այն, որ նոյն մասնագիտական ամբիոնը, որ աստիճանով ասում է քրիստոնեային, անհամեմատ մեծ չափով յարգում, խոնարհվում է մանկավարժական իշխանութեան առաջ, և նրա մտածողութեան մէջ այնքան դեռ բարձր և ուժեղ է սուլթանի և սուլթանի կառավարութեան խօսքը և հրամանը, որ ոչ մի մասնագիտական, ինչքան էլ նա զբաղւած լինի քրիստոնեաների դէմ, իրան ինչ չի տայ դուրս գալ սուլթանի խօսքից, չի համարձակվի չը հնազանդել նրա կառավարութեան կարգադրութիւններին, ինչքան էլ այդ կարգադրութիւնները խիստ լինեն:

Եւ թիւրքիայի վերջին քսան տարվայ պատմութեան մէջ, երբ հայոց հարցը հրապարակ է եկել, մենք չը գիտենք և ոչ մի հատ փաստ, որ մասնագիտական ամբիոնը կոտորէր, ջարդէր քրիստոնեաներին, հակառակ բարձր իշխանութեան հրամաններին:

Ընդհակառակն, ամեն անգամ, երբ թիւրքիայի սահմաններում տեղի է ունեցել քրիստոնեաների կոտորած, թէ Գոնիատանում, թէ Բուզարիստանում, և թէ այժմ Հայաստանում, այդ միշտ եղել է կամ կառավարութեան առաջնորդութեամբ, կամ նրա զորմամբ, ճշմարիտ է, շատ անգամ գաղտնի, բայց շատ անգամ էլ անդադանի կերպով...

Վերջինսը ճշնոյն ամենակերպով դէպքերը.— եւ քրիստոնեային քանիչ յանձնաժողովը ապացուցեց, որ Սասունի կոտորածը սաւառեց ինքը կառավարութիւնը: Այդքան համար զաղտնի չէ, որ Տրապիզոնի սոսկալի կոտորածը նոյնպէս կառավարութեան գործն է: Նոյնը եղաւ և Կ. Պոլսի վերջին ցոյցի ժամանակ: Նոյնն է լինում և այն բոլոր փոքրիկ կոտորածների ժամանակ, որոնք միմեանց ետեւից տեղի ունեցան և տեղի են ունենում թիւրքիայի զանազան կողմերում, ուր ապրում են հայեր...

Թող ցոյց տան մի հատիկ դէպք, երբ թիւրքաց կառավարութիւնը ուզում էր արգելել մահմեդականներին կոտորել քրիստոնեաներին,— բայց չը կարողացաւ: Այդպիսի դէպք չէ եղել, այդպիսի փաստ չը կայ:

Սուլթանի մի հրամանը, նրա փաշաների մի խիստ կարգադրութիւնը բաւական է, որ բոլոր մահմեդականները գլուխ խոնարհեն փառէշահի բարձրագոյն կամքի առաջ, և ճայն ու ծայտուն չը հանեն, եթէ մինչև անգամ սուլթանը կամենայ հայերին տալ նոյն իսկ Մահմեդի զբախտը...

Խ. Մալումեան

ԻՐԱՅԻՄԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՆԱՄԱԿԸ ԼՈՐԿՍՈՒՄԻՒՄԻ

Անգլիական լրագրիւնները տպել են խորում:

չէի ննջարանի վարագոյրը՝ Սանջակ-Շէրիֆը (նախկին զրօշակ) չէ նպատակում, չէ զօրացնում պոռոտախօս զէքէֆներին և հաստաբազուկ զահրիմաններին, որոնք ուսմանը զբաղւում են Կոզլիների առաջից գլխակոր փախչում, վերադառնում են իրանց խիղբեր: Հարկը տարուց աւելի է, որ ոչ միայն մի թիւ հող չէ աւելացել խալիֆի հողերի վրա, այլ կտրովկուլի, մանրվելով, այսօր օսմանեան փառապանծ շրջանում ունեցանք քառորդն էլ հազար է մնացել, թէ և այդ բոլորը չէ խանգարում գոռոզ հիւնքեմարներին վերջին յաջողութիւն, առանց կարմրելու Ղազի (յաղթող) մականունը ևս կրելու իր զեղծւորներին մէջ:

IV. Սուլթանը Մահմեդի տեղակալ և յաջորդ հրատարակելով, անպայման պարտաւոր էր կէտ առնել ընդունել և դաւանել այն օրինադրերը, այն չէրիաթը, որը առանձնապէս օրէնադրից և միայն այդ չէրիաթին անպայման ընդունելով կարող էր համարվել խալիֆների յաջորդ: Ղուրանը իր վարդապետութեան բոլոր հետևողներից պահանջում է անտարակոյս հաւատ և դաւանանք դէպի իր բովանդակութիւնը, որի մի ամենաանդաւն կէտը մասին թիւր կարծիք յայտնելը զատապարտելի է համարում: Այդ վարդապետութեան համաձայն, խալիֆի տիրապետութեան տակ գտնված բոլոր երկիրները պատկանում են «բէյթմալումին» (հասարակութեան գույք) և ոչ թէ խալիֆին, այնպէս որ օսմանեան սուլթաններին խալիֆա հրատարակվելուց առաջ ձեռք բերած բոլոր կալուածներն էլ, առանց պայմանի, խալիֆայութիւնն ստանձնելուց յետոյ, իսկամ

հայոց առաջնորդի հետեւալ նամակը, որ նա ուղարկել է լօրք Սուլթանին:

«Թող տուէր ինձ արտապայտիչ լինել յուսահատութեան այն աղաղակի, որը լսվում է իմ թիւքի ամեն ծայրերում, ուր հայ աղգաբնակիչները արդէն կորցնում է վերկութեան յոյսը թիւքը աղգաբնակիչների զաղանութիւնից և օրից օր աճող թշնամութիւնից:

«Ամենամեծ չորհրակալութեամբ ընդունում ենք մենք նորին մեծութիւն թագուհու օրինական և մարդասէր ջանքերը, որոնց նպատակն է ապահովել մեզ համար խիստ կարեւոր բարենորոգումները: Բայց մենք չենք կարող մոռանալ, որ յապարհման իւրաքանչիւր օր բերում է իր հետ հարիւրաւոր մարդկային զոհեր, որոնք ենթարկվում են ամենաանգութ տանջանքներին, իսկ հարիւրաւոր կանանց պատիւը ենթարկվում է վիրաւորանքներին, չը հաշուելով բազմաթիւ գիւղերի ջնջումը և կողոպտումը, գիւղեր, որոնք այժմ աւերակի կոչուր են ներկայացնում:

«Եթէ կոտորածներ տեղի ունէին Սասունում, այսօր կամխում, վաղը ամենամագոթ բռնաւորութեան լուծի տակ հեծող մեր թշուառ հայրենիքի որ և է ուրիշ անկիւնում: Պէտք է արդեօք մենք սպասենք, որպէս զի Հայաստանը ամբողջապէս երկաթի և կրակի ճարակ դառնայ և մեր զաւակները արկւն թափվի մինչև վերջին կաթիլը, նախ քան մեզ օգնութիւն տրվի: Հայ ժողովուրդը իր յուսահատութեան մէջ դիմում է ձեռք օգնութեան կանչելով: «Փրկեցէք: Խղճացէք: Մենք ևս աղաչում ենք ձեզ, «Խղճացէք մեզ: Շատ կարելի է դեռ ոչ չէ: Փրկեցէք մեզ, եթէ ոչ մենք կորչում ենք:»

Ստորագրութիւն

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԴԻՊԼՈՄԱՏԻԱ

I Հոգեհանգիստ

Սօֆիայից լրագրիւններն հեռագրում են. «Այստեղի հայոց ժողովուրդն հոգեհանգիստ կատարեց Կ. Պոլսում զոհ գնացած հայերի համար: Մաղթանքն ներկայ էին շատ մակեդոնացիներ»:

II Պապի քաղաքականութիւնը

Խաղաղական «Tribuna» լրագրիւնը հաղորդում է, որ անգլո-հայկական մասնաժողովի քարտուղարին պապը չընդունեց ոչ թէ հիւանդութեան պատճառով, ինչպէս հաղորդեցին մի քանի լրագրիւններ, այլ այն պատճառով, որ պապը չը ցանկացաւ զբաղւել վիրաւորել սուլթանին:

III Ինքնախաբէութիւն

Սուլթանը, եւրոպական լրագրիւնների խօսքով, չէ վստահանում մինչև անգամ «կրճատած» թէֆօրմները անյապաղ մտցնել Հայաստանում: Նա սկզբունքով ընդունեց այդ նախագիծը, բայց

հասարակութեան սեփականութիւն դարձան: Խալիֆը իսլամի առաջնորդն է, նրա զինուորական զօրութեան գլխաւոր հրամանատարն է, նրա նուիրական քաղաքների (Մէքքէ-Մէդինէ) պաշտօնեան է, մի խօսքով նրա կարողութեան աւանդապահ է, բայց երբեք տէր չէ, ծախելու, փոխելու, նուիրելու իրաւունք չունի: Կարող է իր արժանաւոր հպատակներին երկրի այս ու այն կողմի երեսից օգտվելու արտօնութիւնը տալ, նուիրել, բայց օտար պետութեան անցկացնելու տեսակէտով բաշխել երբեք չէ կարող: Մինչև անգամ, չէրիաթի համաձայն, խալիֆը իրաւունք չունի պետութեան եկամուտներին զեղչելու, իւրացնելու, բացի իրան համար որոշված թոշակից: Երկրի եկամուտը գործադրվելու է հասարակութեան բարեքի, իսլամի ասարածման և բարգաւաճման համար:

Եւսէր խալիֆի որդին,—աւանդաբար պատմվում է հաղորդում և կենսագրութիւնների մէջ,—մի օր մօտեցաւ հօրը և խնդրեց, որ իրան մի զրհէմ (կէս մսխալ) արծաթ տայ, որպէս զի մի վերարկու գինի:—Որդեակ, պատասխանում է հայրը, սպասիր մինչև վաղը, այս օրվայ հինգ զրհէմ թոշակս արդէն ծախված է, իսկ հասարակութեան պատկանող զանձին, իմ գիտես, չեմ կարող զեղչել:

Այն ինչ ներկայ խալիֆների յաջորդը, առանց տարտնակելու, առանց մի կաթիլ արկւնի, փախանակ քրտիւր թափելու, ոչ թէ «բէյթմալումին» եկամուտից, այլ պետութիւնից Կիպրոսի նման մի ահագին կղզի բաժանեց և տուեց անգլիացիներին, Բոսնիա-Հերցեգովինայի նման նահանգներ:

հրաժարվում է անյապաղ իրադրծել զբանց, որովհետև վախճում է, որ չը կարծեն, թէ ինքն ընդունել է թէֆօրմների այդ նախագիծը հայկական խառնակութիւնների ճնշման տակ:

IV Հայոց պատրիարքը

Պետերբուրգից «Нов. Обозрение» լրագրիւնը հեռագրում են. «Politische Correspondenz» լրագրիւնն ասում է, որ թիւքաց շրջաններում մեղադրում են պատրիարքին, որ իւր թէ նա մասնակցութիւն է ունեցել խառնակութիւններին, և Կ. Պոլսում սպասում են նրա հրաժարականին:

V Ջանադան կարծիքներ

Հայկական թէֆօրմների ծրագրի ընդունվելու առիթով, եւրոպական լրագրիւնները տարբեր կարծիքներ են յայտնում: Օրինակ, «Standard» լրագրիւնը գոհ է երևում և չորհաւորում է մարկիզ Սուլթիւրին՝ անգլիական կառավարութեան քաղաքականութեան աջողութեան համար և դուրս է Ռուսաստանի ու Ֆրանսիայի օրինականութիւնը:

«Times» լրագրիւնը, ողջունելով սուլթանին, յայտնում է, որ հայկական թէֆօրմների ծրագիրը ճշգրտել և բարելոյճաբար կը գործադրվի: Սակայն «Times» խոստովանում է, որ նախագիծ իրադրծումը զանազան դժուարութիւնների հետ է կապված:

«Daily News» լրագրիւնը պէսիմիստական լեզուով է խօսում և թիւքիւն հիւանդ է համարում: Ազատամիտների օրդանը հիասթափված է և յայտնում է, որ մարկիզ Սուլթիւրի, համաձայնութիւն կայացնելով Բ. Դրան հետ, իսկապէս հրաժարվեց իր բոլոր նախկին պահանջներից, և որ այդ համաձայնութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հետեանք անգլիական անախդ քաղաքականութեան Կ. Պոլսում:

VI Շիւքեթ և չէ միթէ

Կ. Պոլսից «Новости» լրագրի թղթակիցը հեռագրում է հոկտեմբերի 7-ից. «Standard» հաղորդում է, որ երէկ Կ. Պոլսում շատ սօֆիստներ կամենում էին ցոյց անել Բ. Դրան դէմ՝ Հայաստանի թէֆօրմների ծրագիրը ընդունվելու պատճառով: Բ. Դրանը խնայաւոր և ոտնիկներին փամփուշտներ բաժանեց՝ խառնակութիւնների դէպքի համար: Սօֆիստները չը վստահացան ցոյց անել և ցրվեցին»:

VII Գաւառի քաղաքականութիւն

«Times» լրագրի խօսքով Կ. Պոլսի բրիտանական դեսպան Ալքրիի մօտ գնացին հայերը և խնդրեցին նրան զգուշանալ, որովհետև հին կուսակցութեան պատկանող թիւքերը դիտաւորութիւն ունեն վարձել մի թափառաշրջիկ հայի՝ զեպանին սպանելու նպատակով, որպէս զի զբանով արատաւորեն հայ ժողովուրդը:

րը՝Աստրիային, Թէսալիայի և Եպիրոսի կէտը՝ Գոնիատանին: Յայտնի բան է, մաղն ու մանանիսը քննող մանրադնին իւլէմները նկատում են, զգում են, ցաւում են, բայց զօրաւորներն անկարող են խօսելու, իւղալի պաշտօնների թեկլիւնները, մօլլաների ձայնը լսեղծված է, էլ ինչպէս իսլամը այդ պարտապանց աւանդապահին խալիֆ ճանաչի ու դաւանի:

V. Խալիֆը իշխանութեան տակ պիտի ունենայ նուիրական քաղաքները (Մէքքէ-Մէդինէ) ու նրանց ճանապարհները աղատ և ապահով պիտի պահպանէ հայի գնացողների առաջ: Եւ վերջապէս, օրինակաւորութեան դասն անցած իսլամական սերբազան, նուիրական իրերը պարտաւոր է իր տրամադրութեան տակն ունենալ:

Այս բոլորը ճշգրտվեալ կատարում է խալիֆը, այնպէս որ սրանց մասին զգոհ լինելու առիթ չունեն իսլամները: Թէ ինչ զոհողութիւններ է անում սուլթանը Մէքքէի ու Մէդինէի համար, այնտեղ գնացող հայիկների համար, և նոյն երկրում ապրող իւլէմներին, չէլսներին ինչպէս է վարձատրում, վերել նկարագրեցին: Իսկ սրբազան աւանդական նիւթերը ամենայն անխառնութիւնով ու խնամքով սուլթանը պահում է իր պալատում, կրկնակի, քառակի փականքների տակ, ամենախիտ զգուշութիւնով:

1) Այժմ քրիստոնէական Սանջակ-Շէրիֆը (նուիրական զրօշակ), որը առաջին անգամ Մահմեդը քաջեց Ալեքէյի ննջարանից տարաւ, բարձրացրեց որպէս զրօշակ՝ ամբողջ Մէքքէ ու Միտի տանելու համար: Այս զրօշակը Աբուբէքրի հրամանով

VIII Խալիֆան և հայոց հարցը

Հոսմից, «Berliner Tageblatt» լրագրիւնը հեռագրում են հոկտեմբերի 5-ից. «Միտիստների խորհրդի այսօրվայ նիստում արտաքին գործերի միտիստը յայտնեց, որ խալիֆայի և եւրոպական միացած պետութիւնների մէջ կատարեալ համաձայնութիւն կայ հայկական թէֆօրմների հարցի վերաբերմամբ: Ներկայումս գործերը այնպիսի ընթացք են ընդունում, որ այլ ևս կարիք չի զգացվի խաղաղական պատերազմական նաւեր ուղարկել թիւքաց ջրերը, որովհետև թիւքիւն, ըստ երեկոթի, պատրաստ է անհրաժեշտ դիւլոմներն անել՝ հանգստութիւնը վերականգնելու համար»:

IX Թօշօրի հրահանգ

Ինչպէս յայտնի է, Պարիզում բնակվող հայերը դիմել էին յայտնի հրապարակախօս և գործիչ Թօշօրին մի ուղերձով, խնդրելով որ Ֆրանսիան ևս չը զլանայ իր աջակցութիւնը հայոց հարցի լուծման համար:

Թօշօր ընդունելով հայերի խնդրքը, տպագրել է մի հրահանգ, որի մէջ վառ գոյնիւրով նկարագրելով հայերի զարհուրելի վիճակը թիւքիւն, սաստիկ պախարակում է Ֆրանսիայի բռնած անարժան ընթացքը հայոց հարցի վերաբերմամբ:

X Սպանութիւն

Բէյաէրի գործակալութիւնը հաղորդում է, որ Կ. Պոլսի կոտորածի ժամանակ նախկին մեծ վիզիր Ֆէվառ-փաշայի տանը ծառայող երկու հայ աղախիւններ սպանվեցին տան միւս թիւք ծառաների ձեռքով:

XI «Կաւից շինած հակա»

Լօնդոնի ազատամիտ լրագրիւնը զգոհ են Սուլթիւրից: Շատ զգոհ է նրանից և անպօհայկական կոմիտեան, որը դաւաճան է անուանում նրան: «Լօրք Սուլթիւրին աղամանդից չի նաձ հակա էր երևում, բայց բանից դուրս եկաւ, որ այդ հակա կաւ ռոմեր ունի: Նա յետ կանգնեց իր պահանջներից հայոց հարցում, և դա մի բիծ է բրիտանական անուան համար»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՄԱԿԻ ԱՅԺՄԵԱՆ ԳՆՆԵՐԸ

Այս տարի բամբակի գինը թանկացել է: Անցեալ տարվայ հետ համեմատելով՝ բամբակի պուրը այժմ մօտ երկու բուլըլ աւելի արժէ:

Այս հանգամանքը պէտք է աչքի առաջ ունենան մեր բամբակ արդիւնաբերողները, որոնք շատ անգամ տեղեկութիւն չունեն մեծ վաճառանոցների գրութիւնից:

Բամբակի թանգամալու պատճառները հետեւ-

մեծ խնամքով պահվելով յանձնվել է յաջորդաբար Շամի (Գամակալ), Բաղդադի, Գահիբէյի խալիֆներին, որոնցից յաջորդակեց Ալեքի Ա. որպէս յաջորդ խալիֆութեան: Խալիֆները հաւատում են, որ եթէ այդ զրօշակը պարզվի պատերազմում՝ անպատճառ իրանք յաղթող կը հանդիսանան:

2) Սրա հետ պահվում է Խօմէրի զրօշակը, որի հրաշագործութիւնը նախորդից քիչ նուազ է համարվում:

3) Խրիսթի Շէրիֆը (նուիրական վերարկուն), որը Խօմէր գնեց Ջէհէրի որդուց, որին նուիրել էր Մահմեդը: Այս հրաշագործ համարված վերարկուն քառասուն կաղոցների մէջ փաթկված, մեծ զգուշութիւնով պահվում է մինչև օրս, որին համարում են տալիս ամեն տարի մի անգամ խալիֆը ու նրա մեծամեծները: Ասում են, որ ասրից է գործված և զարմանալի է, որ հազար երեք հարիւր տարվայ ընթացքում չէ փթել:

4) Քէաբէի արծաթեայ բանալին, որը Մէքքէի Շէրիֆը նուիրեց Ալեքի Ա-ին Մէքքէի, Մէդինէի բանալիների հետ:

5) Մահմեդի մօրուսի մաղերը:

6) Մահմեդի նալները (փայտի քոչեր):

7) Խօմէրի ինքնաձեռագրի մի մատեան և ուրիշ մանր մօտի իրեր, որոնց ամեն մէկի հետ կապված է իսլամի քարոզչների, նախկին դաւանողների, խալիֆների, զօրականների և իւլէմների կեանքից այլ և այլ դէպքեր, առասպելներ, վեպեր:

(Կը չարունակվի)

հետ կերպով է բացատրում Ն. Տարախնով՝ «Кавк. Сел. Хозяйство» լրագրում:

Ամերիկայում, ուր մեծ քանակությամբ բամբակ է մշակվում, մի քանի տարուց ի վեր սկսել են գնները ընկնել, և մասնաւոր ստորին ընկան անցեալ 1894 թվին. այդ պատճառով ներկայ 1895 թվին երկրագործները բամբակ քիչ էին ցանել, նախկին տարիների հետ համեմատած 1 1/4 միլիոն դեմիտին պակաս: Միւս կողմից, պատահաբար, ներկայ 1895 թվի բամբակի հունձը եղել է շատ անաջող. երկրագործները ստացել են սպասած հունձի միայն 7/10 մասը:

Աւելացրեք դրան և այն փոփոխութիւնները, որ մտցրել է անցեալ տարվանից ուստաց կառավարութիւնը, արտասահմանից ներս մուծվող բամբակի վրա աւելացնելով մաքս՝ 70 կոպէկ պտղին: Այս վերջին փոփոխութիւնները անցեալ տարի չը կարողացան զգալի կերպով ազդել գների վրա, որովհետև բամբակի գլխաւոր առքը կատարված էր: Բայց այս տարի այդ ազդեցութիւնը արդէն շատ զգալի է:

Մասկվայում և Լոնդոնում անցեալ տարի այս ժամանակ բամբակի պուզը արժէր 8 րուբլի, իսկ այժմ՝ 10 րուբլի: Ուրեմն Ամերիկայի սերմից ստացած բամբակը և Անգլիոյ կառավարութեան պէտք է արժենայ՝ մաքրածը մօտ 8 րուբլի, իսկ չը մաքրածը՝ 2 րուբլի:

Յանկայի է, որ այս հանգամանքը ի նկատի ունենան մեր գիւղացիքը, և չը շտապեն էժան ծախել իրանց բամբակը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՈՒԹԱՆ

Մշնախ, հոկտեմբերի 9-ին

Թող տուէք հնգրէկ Մշնախից «Մշակի» № 107-ի մէջ հաղորդած այն լուրը, որի հեղինակը իզուր է աշխատում մեզ վրա ստուեր գցել և ընթերցողներին մոլորեցնել. քանի որ մենք, պաշտօնում հաստատվելուն պէս (յունիս, 1894 թ.) անմիջապէս դիմել ենք զանազան միջոցների՝ սեփական և յարմարաւոր շինութիւն ունենալու և նիւթերի մի մասը անգամ արդէն գնել ենք: Մակայն, չհարձաք մեզանից անկախ մի քանի խոշորոտների, այս տարի շինութեան հարցը մնաց անկատար, ուստի ստիպված վարձեցինք մասնաւոր մի տուն, որից աւելի յարմարաւոր չը գտանք: Եթէ լրատուին յայտնի է աւելի համապատասխանը, թող բարեհաճէ յայտնել մեզ և մենք ուրախութեամբ կը վարձենք, մասնաւոր որ տակաւին չենք պայմանաւորվել այս ուսումնական տարվայ համար:

Իսկ ինչ վերաբերում է մեր անհոգութեանը, թող պարոնը փաստերով և ոչ լոկ խօսքերով ապացուցանէ, թէ ինչի մէջն է կայանում մեր անհոգութիւնը:

Նախագահ հոգաբարձութեան՝ Արշակ քնն. Տէր-Ստեփանեան Հոգաբարձունք՝ Բիւրիկ Մ. Մովսէսեանց Միջոցէլ Խարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր ընթերցողներին յայտնի է անգլիացի յայտնի քարտիչ կանծակիտ Մաքք օլմ Մալկօլի «Անգլիայի պատասխանատուութիւնը Հայաստանի վերաբերմամբ» վերնագրով գիրքը, որ թիւրքերէնով տիրող օրէնքների և կարգերի մի անաչառ և լուրջ քննադատութիւն է: Այդ գիրքը արդէն թարգմանվել է մեր խմբագրութեան մէջ և «Մշակի» առաջին կամ համարներից կը սկսենք տպագրել:

«Daily News» լրագրի վերջին համարում տրված ցուցակից երևում է, որ հայկական ֆոնդի գումարը մինչև հոկտեմբերի 1-ը հասել է 6700 ֆունտ ստէրլինգի, կամ մօտաւորապէս 67 հազար րուբլու:

Ատորախանի թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը, ինչպէս հաղորդում են Ատորախանի ուսումնական լրագրից, հասել է Ատորախան հոկտեմբերի 4-ին:

«Աղբիւր-Տարաղի» խմբագրութիւնից ստացանք Դրբի Դրբի Արծրունու պատկերը ձնապակով վրա նկարած: Դա մի գեղեցիկ գործ է, պատրաստած Լոնդոնում, «Տարաղի» խմբագրութեան

պատուէրով և կարող է զարդ լինել ամեն մի հայի գրասեղանի համար:

Կառավարութիւնը մտադիր է Կասպից ծովի ափին աւազուտ հող ունեցող մի աշուտ բուսցնել ամերիկական խաղողի վաղ եր և այնտեղից բաժանել արմատներ Անգլիոյ կառավարութեան այգեգործներին: Ինչպէս յայտնի է, աւազուտ տեղում ֆիւլօքսերան չէ կարողանում զարգանալ և ուրեմն այդտեղ բուսցրած վաղերը աղատ կը լինեն այդ սարափերի հիւանդութիւնից:

Վերջին տարին հինգ տարվայ ընթացքում սիֆիլիսը Ռուսաստանում շատ արագ տարածվում է: 1880 թվին հաշուում էին մօտ 1/4 միլիոն սիֆիլիսով հիւանդ, 1886 թվին՝ մօտ 1/2 միլիոն, 1890 թվին՝ աւելի քան 900,000, իսկ այժմ՝ մի միլիոնից աւելի, այնպէս որ Ռուսաստանում հարկւր մարդու վրա գալիս է մի սիֆիլիսով հիւանդ: Այս երկուսը ուշադրութեան արժանի է և անհրաժեշտ են հիմնաւոր միջոցներ մաքրութեւնը այդ վտանգաւոր և կործանիչ հիւանդութեան դէմ:

Վերջին օրերս ուխտ գնացին Պարսկաստան 200-ից աւելի բազուկեցի մահմետականներ: Նորբերս, «Каспий» լրագրի խօսքով, երբ «Իրան» շոգենաւ պատրաստվում էր ճանապարհ ընկնել, նաւապետը նկատեց, որ մի քանի մահմետականներ բերել են իրանց հետ տօպրակներ և կապոցներ: Այդ բանը կասկածելի երևաց նաւապետին, և նա կամեցաւ քննել կապոցները: Մեծ էր նրա դժմամբը, երբ քննելով կապոցները գտաւ նրանց մէջ մարդու ոսկորներ: Իսկոյն ոստիկանութիւն հրաւիրեց, և քննութիւնից երևաց, որ այդ ոսկորները պատկանում են մահմետականների մեռած ազգականներին, որոնք, ըստ սովորութեան, կամենում էին տանել այդ ոսկորները քերական: Այնտեղ թաղելու համար: Ոստիկանութիւնը կալանաւորեց այդ մահմետականներին:

Մասկվայի վաճառական Կալցոյով, մայրաքաղաքի լրագրից խօսքով, 170,000 ր. նուիրեց Մասկվայում մի իգական տարրական դպրոց հիմնելու համար:

Նորբերս Ռէվելում արդարադատութեան միջնորդ Մուրադովի մի ճառ արտասանեց, որ իր վրա դարձրեց ամբողջ ուսումնական ուշադրութիւնը: Առաջ ենք բերում միջնորդի մի գեղեցիկ կտորը. «Հեռու որ և է տեղեկացնաներից—կրօնական, քաղաքական, կուսակցական—դիմում միմայն արդարութեան և ողորմութեան դէմը:—դատարանը կարող է անարիւտ և ատելի լինել միմայն նրանց գաղտնի և ակնյայտի թշնամիների համար: Այնչէս այդքան չէ խաղաղացում կրքերը, որքան դատարանի ներշնչած համոզմունքը, թէ չը կայ նրա համար ոչ հրէայ, ոչ հեթանոս», որ նա ուշադրութիւն չէ դարձնում ոչ կրօնի, ոչ լեզուի, ոչ ծագումի, ոչ դասակարգի և ոչ հարստութեան վրա, այլ նրա համար կան միմայն արդարներ և մեղաւորներ, վիրաւորածներ և վիրաւորողներ,—անձինք, որոնք արժանի են պատմի, և անձինք, որոնք պաշտպանութեան կարիք ունեն: Մի այդպիսի դատարանի առաջ ամենքը գլուխ են խոնարհեցնում, և ամենքը մօտենում են նրան վստահութեամբ և յարգանքով:»

Այս օրերս թիֆլիս հասաւ գերմանացի ճանապարհորդ Հանս Կնօլ, որը մտադրութիւն ունի ճանապարհորդութիւն կատարել աշխարհի չորսը վերջնապէս: Միւսերից մինչև Կ. Պօլիս ամբողջ ժամանակը Կնօլ վերջնապէս անցնել մտադրութիւն ունի այդպիսով անցնել ամբողջ փոքր-Ասիայով, բայց թիֆլիսից կառավարութիւնը թալուարութիւն չը տուեց նրան, այնպէս որ նա ստիպված էր չորհրդաւոր Բաթում գալ, և այնտեղից շարունակել իր ճանապարհը:

Հրատարակական ընկերութիւնը երկրորդ տպագրութեամբ լոյս ընծայեց մեր յայտնի երգիծաբան Պարոնեանի «Մեծապատիւ մուրաց-կանները»:

«Պալեանցի» և «Cavalleria Rusticana» օպերաների ներկայացումը, որ տեղի ունեցաւ հինգ-

շաբթի, ամսիս 12-ին, երրորդ անգամ է, որ տրվում են այս սեզոնին: Մենք ներկայ էինք միայն առաջին օպերային: Ներկայի մէջ աչքի էին ընկնում Գեղիկեր՝ Պալեանցի դերում և Գեղիկ Զիւրբիկին-Բեադնովա՝ Ներկայի դերում: Ներկան էլ մեծ վարպետութեամբ էին կատարում իրանց դերը: Տիկինը չը նայելով իր տարիքին՝ երգում է դեռ աջող և խաղում է բաւարար, բայց գործ է ածում կրակեղան չօղայի արհեստական ձեւը: Միւս կատարողները թոյլ էին:

ՆՈՒՐԱՅԱՋԷԹԻՅ մեզ գրում են. «Հոկտեմբերի 7-ին այստեղ եկաւ մեր թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսը: Սրբազանին պատուելու համար ընդ առաջ էին գնացել մի քանի քաղաքացիք, իսկ ամբողջ հասարակութիւնը դիմաւորեց նրան ս. Կարապետ եկեղեցու գաւթի դրան: Սրբազանը հասարակութեան ծանօթ մարդ է. նա մեղանում վարել է դատարի գործակալի պաշտօնը: Յուսով ենք, որ Անանիա եպիսկոպոսը, ի թիւս շատ կարեւոր գործերի, հոգ կը տանի և գաւթի մասին՝ ուր 60—65 հայ գիւղերում ոչ մի հայ դպրոց չը կայ, թէև Կաթողիկոսից բերված են կոնդակներ, բայց մինչև այժմ անգործադրելի են մնացել:»

ՆՈՒՐԱՅԱՋ մեզ գրում են. «Հոկտեմբերի 1-ին, Կաթողիկոսի օժան երկրորդ տարեգործի առիթով, օրիորդական դպրոցի դահլիճում հանդէս կատարվեց. բացի աշակերտներից և աշակերտուհիներից, ներկայ էր մեծ հասարակութիւն: Օրվայ տօնի առիթով խօսեց ուսուցիչ Հ. Տէր-Միքայէլ Լիւնը, երկխոսեցի մի քանիսը ոտանաւորներ կարգացրին, իսկ խումբը երգում էր քառամայն երգեցողութեան ուսուցիչ Ա. Մուրադբեգեանի ղեկավարութեամբ: Ուշադրութեան արժանի է և այն երկուսը, որ խմբին մասնակցում էին և ուսուցիչները: Հանդէսի վերջում դպրոցիների աւագ ուսուցիչ Ա. Ոսկանեանը ծնողներին հրաւիրեց հոկտեմբերի 8-ին դպրոցի դահլիճ՝ աշակերտների և աշակերտուհիների վերաբերեալ մի քանի կարեւոր հարցերի մասին խօսելու: Մտադրական ժողովներ Նոյնում չեն եղած. սա առաջին անգամն է: Իրաւից ենք, որ այդ ժողովները ապագային չեն մնայ:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Կ. Պօլիս, հոկտեմբերի 6-ին
Ներկի երկկայան ամեն տեղ լուր տարածուեցաւ, թէ սուլթանին ու դեսպաններուն մէջ համաձայնութիւն եղած է հայկական բէֆօրմների մասին:

Հայոց վաճառատունները, որ փակված կը մընային՝ սկսան բացուիլ, և բերնէ բերան աւետիս մը կը թուչի:

Մինչև չարաթի, իբրև թէ, ամեն բան երևան ելած կըլլայ: Տեսնենք:

Պ—ի

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Կ. Պօլիս, հոկտեմբերի 3-ին
Ահա ճիշդ չարաթ մըն է, որ Տրապիզոնէն վրդովիչ լուրեր հասած են, սակայն ոչինչ գիտենք ստույգ. ոչ նամակ կայ, ոչ եկող, ոչ հեռագրի: Պաթումէն մեկնող չորհրդաւոր Տրապիզոնէն ասդին չեն ի դար. Պօլսէն զարնուած հեռագրիներուն պատասխան տուող չի կայ. երօսական թերթերն են, որ մեղի քանի մը դառն լուրեր կը բերեն. մտաւսնալութիւնը ընդհանուր է. բերան-նիս չի բացուիլ: Ո՛ր էր թէ մէկը խեղ ըրած ըլլար և Պաթումէն Օղէնայի վրայով նամակ, լուր հասցնէր մեղի:

Մինչ այդքան հեռուէն լուրի կը սպասենք, հոս մեր աչքին տակ նոր կոտորածի մը լուրը դեռ նոր ստացանք: Անցած չորեքշաբթի, սեպտեմբեր 27, կոտորած եղած է Ագ-Սար. 100—150 հատ ջարդուներ են թիրբերէն, Ագ-Սարը Ատաբաղարի մօտերն է. Պօլսէն չորեքշաբթի քանի մը ժամուան մէջ Ատաբաղար կերթցուի: Պաղարի օր, երբ խեղճ հայերը հանդարտօրէն իրենց վաճառականները կընէին, թիրբերը վրանին յարձակելու ու ջարդելու անդէն ժողովուրդը: Ոսկորները, կոտորածները լեցուցեր են հորերը, ոսկից հիմա կը հա-

նեն: Մանրամասն տեղեկագիրը պատրիարքարան հասաւ: Լուրը հաղորդուեցաւ անգլիական թերթերու:

Կ. Պօլիս առեւտրական կենտրոնը դադրած կը մնայ. Սթամպուլի կողմը հաս այսօր 16 օր է, որ հայոց վաճառատունները, խանութները փակ կը մնան. Ղալաթիոյ կողմն ալ նմանապէս փակուած են. բերայ ալ փակուածները սկսած են: Մէկ կողմէն թիրբ խուժանէ վախ, միւս կողմէն դանաղաներու կողմէն սպառնալիք՝ այս վիճակը առաջ բերին, աւելցուցէք ասոր վրա վաճառականներուն տագնապը: Հայաստանէն, գաւառներէն դրամ չի գար. Պօլսոյ վաճառականը իր վըճարումները ընելու անկարելիութեան մէջ կը գտնուի, նա մասնաւոր ապրանք գնող չի կայ: Բայց այս փակումը կը վնասէ հայերուն խանութպան դասակարգին. օրէ վատկող, օրէ ուտողները ինչ ընեն: Կը կարծուի թէ վաղը կամ միւս օր կը բացուին խանութները:

Ղալաթիոյ եկեղեցիի մէջ ապստամբող կին մը աղջիկ դաւալ մը բերաւ ժամուն մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Կ. Պօլիս, հոկտեմբերի 4-ին
Բէֆօրմների հարցը վերջացնելու հարկ կը տեսնուի, վասն զի վախ կայ, թէ ծանր դէպքեր կընան պատահիլ գաւառները և Պօլիս: Ներկա օր է որ մայրաքաղաքին մէջ լուրեր կը պտուին, թէ այս օրերս նորէն ցոյց մը պիտի ըլլայ, թէ երկու հարկու կին վաղը կամ միւս օր նոր յայտարարութիւն մը պիտի տանին ուղղակի սուլթանին՝ Ներադի-բեօյի: Իմ մասին այս լուրին ճշդութիւնը տարակուսական է. սեպտեմբեր 18-էն ետքը, երբ մեր խոյրը վերականգնաւ, անմիջապէս նոր ցոյց մը կընայ վաճառակար հետեանքներ ունենալ, կամ թէ անօգուտ ըլլաւ. դործը առաջ կըրթայ, պղծանք հիմա կը բուռ, այս և ուրիշ տեսութիւններով կընամ ենթադրել թէ հանդարտութեան պէտքը կը զգան ամենքն ալ և կը մնան խաղաղ:

Բայց կերի: Թէ կառավարական չըլնաներու մէջ տարբեր համոզումներ կը տրեն, և նոր ցոյցի մը երկիւղը միշտ կը տրէ: Ներկա օր առաջ գիշերը, ժամը 10-ին, սատարագամին կընապահ մէկէն ի մէկ պատրիարքին գնաց և երկար տեսակցութիւն մը ունեցաւ: Մանրամասնութիւնները չենք գիտեր, բայց սա չափը տեղեկացանք, թէ նոր ցոյցին վրա խօսած են: Կնքադան խոյրած է, որ պատրիարքը արդեւէ պղծակի ցոյց մը, որուն հետեանքներ կընան սուղի նստիլ, պատրիարքը պատասխանած է: Թէ ինք բան մը չի գիտեր, բանէ մը տեղեկութիւն չունի. ինք ազդեցիկ չէ ժողովրդին վրա, քանի որ իր առաջարկներէն մէկը իսկ չէ ընդունված կառավարութեան, որով ինք պատրիարքն ալ կարենար ըսել ժողովրդին, թէ իր խօսքին հաւատան, Գրան մօտ ըրած միջնորդութիւնը ապարդիւն չի մնար:—Այս նկատողութեան պատասխան չի կայ: Մարդը կը մեկնի:

Պատրիարքը տարօրինակ զիբքի մը մէջ կը գտնուի. եղած չարժանեւորուն ոչ մասնակից է, ոչ լաւատեղեակ. թէ դեսպաններուն և թէ Գրան հանդէպ կատարեալապէս ուղղափառ քաղաքականութեան կը հետեի, բայց որո՞ւ հակցնել: Կառավարական չըլնաներուն մէջ կարելի չէ հաւտացնել, թէ պատրիարքը չէզոք է յեղափոխական գործին մէջ: Խմբիւրեան պատրիարքը սրանեղի այս կացութեան համար ու քաջաւած կը մնայ: Կրօնական և քաղաքական ժողովները այսօր խառն նիստ պիտի ընեն. հրաւիրադիրները պատրիարքը չը ստորագրեց, այլ տեղապահը, ինչ որ ուշադրաւ իրողութիւն մըն է, պատրիարքի բացակայութիւն կենթադրէ: Չենք գիտեր թէ պատրիարքը այսօր պիտի նախագահէ ժողովին. եթէ «հիւանդ եմ» ըսելով պատրիարքարան չերթայ, ժողովականները իր առջը պիտի գնան: Չենք կարծեր որ պատրիարքը արդարապէս կամ անարգաբանալի նկատումներով պատրիարքական հրաժարականի խոյրը յարուցանէ աս տագնապալից օրերուն մէջ: Մարդիկ մասին վերջի պահուն ստացած կազմութիւն ապահով լուրերէն խմբիւրեան պատրիարք անշուշտ կողմորդի: Ամեն պարագային մէջ անձկութեամբ կը սպասենք այսօրուան ժողովին արդիւններուն:

